

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 42/3

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով «Գեղարդ-Ա» ՍՊԸ վերաբերյալ տվյալները լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու դեմ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ս.թ. փետրվարի 8-ին «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) հետ կապված գործերով բողոքաբերը այցելել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, որտեղ տեղեկացել է, որ Ընկերությունը լուծարված է, ինչն իրեն համար անսպասելի և անցանկալի իրադարձություն էր: Այդ կապակցությամբ բողոքաբերը հայտնում է հետևյալը.

Համաձայն ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի 27.03.2018թ. քաղվածքի, «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ի միակ մասնակից է հանդիսանում Գագիկ Փանոսյանը: Գայանե Իսկանդարյանը և Գագիկ Փանոսյանը հանդիսանում են ամուսիններ: Գագիկ Փանոսյանը մահացել է 24.12.2013թ:

Համաձայն թիվ Ա 000039 սեփականության վկայագրի ք.Երևան, Ավան-Առինջ թաղամաս 2-րդ միկրոշրջան 2/5 շենք, բն. 37 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ին:

Համաձայն ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի 07.05.2018թ. թիվ 54601-18 գրության «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ն ներառված է եղել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից լուծարման ենթակա հարկ վճարողների ցուցակում և լուծարվել է համաձայն «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի:

«Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հունվարի 1-ը հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն), հարկային մարմնում առկա տեղեկություններով չունեն գույք (անհատ ձեռնարկատիրոջ մասով՝ անհատ ձեռնարկատիրոջ անունով հաշվառված) և 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապե-

տության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել:

Վերը նշված հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է կոնկրետ վավերապայմանների սպառիչ ցանկ, որոնց միաժամանակյա առկայության դեպքում պետական լիազոր մարմինն իրավունք է վերապահվում լուծարել կամ հաշվառումից հանել համապատասխան հարկ վճարողին:

Տվյալ պարագայում, «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ի անվամբ ՀՀ-ում հաշվառված է եղել անշարժ գույք, հետևաբար վերը նշված օրենքի դրույթները «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառելի չեն եղել և բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել Ընկերության լուծարումը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գեղարդ-Ա» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 18.08.1997թ.:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված թիվ Ա000039 վկայագրի համաձայն սեփականության իրավունքով «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ին է պատկանում ք.Երևան, Ավան-Առինջ թաղամաս 2-րդ միկրոշրջան 2/5 շենք, 37 բնակարանը:

«Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ն 30.12.2017թ. լուծարվել է:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

«Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հունվարի 1-ը հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն), հարկային մարմնում առկա տեղեկություններով չունեն գույք (անհատ ձեռնարկատիրոջ մասով՝ անհատ ձեռնարկատիրոջ անունով հաշվառված) և 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել»:

Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Գույքի գրանցում (հաշվառում վարող) և (կամ) գույքի նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները գրանցող (հաշվառող) համապատասխան լիազոր մարմինները սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ցանկերը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում, հարկային մարմնին տրամադրում են տեղեկատվություն լուծարվող (պետական հաշվառումից հանվող) հարկ վճարողների նախնական ցանկում ներառված այն հարկ վճարողների վերաբերյալ, որոնց մասով առկա է տեղեկատվություն իրենց անվամբ գույք հաշվառված (գրանցված) լինելու մասին»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Հարկային մարմինը սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն ստանալուց հետո սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կազմում է լուծարման (պետական հաշվառումից հանման) ենթակա հարկ վճարողների ցանկերը»:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ հարկային մարմնի գործողությունները՝ կապված «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները վերոգրյալ ցանկում ներառելու և ՀՀ պետական ռեզիստր ներկայացվելու հետ, եղել են ոչ իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ.

Քննարկվող դեպքում ընկերության վերաբերյալ տվյալները համապատասխան ցանկում ընդգրկվելու և պետական ռեզիստր ներկայացվելու դրությամբ «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ն ունեցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք: Մասնավորապես, գործում առկա է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված թիվ Ա000039 վկայագիրը, որի համաձայն սեփականության իրավունքով «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ին է պատկանում ք.Երևան, Ավան-Առինջ թաղամաս 2-րդ միկրոշրջան 2/5 շենք, 37 բնակարանը:

Վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ն, ըստ էության, չի բավարարել Օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին, հետևապես նաև «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքով սահմանված ցանկում ընկերության վերաբերյալ տվյալները չպետք է ընդգրկվեին:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ոչ իրավաչափ ճանաչել «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից «Գեղարդ-Ա» ՍՊԸ լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու գործողությունը:

2. «Գեղարդ-Ա» ՍՊԸ-ին համարել «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն լուծարվող հարկ վճարողների ցանկում ներառելու ոչ ենթակա:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ